Հավելված
ՀՀ կառավարության 2011 թ.
մարտի 24-ի նիստի N 11
արձանագրային որոշման

ՎԱՐԿ համար 4838 AM

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

(Զարգացման քաղաքականության երկրորդ ծրագիր)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

և

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ

միջև

Թվագրված՝ 26-ը հունվարի, 2011 թ.

ՎԱՐԿ ՀԱՄԱՐ 4838 AM

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Համաձայնագիր՝ թվագրված 2011 թվականի հունվարի 26-ով, կնքված ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ (Ստացող) և ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ (Ընկերակցություն) միջև՝ Ծրագրին աջակցելու համար ֆինանսավորում տրամադրելու նպատակով (ինչպես սահմանված է սույն Համաձայնագրի հավելվածում): Ընկերակցությունը որոշել է սույն ֆինանսավորումը տրամադրել, ի թիվս այլնի՝ (ա) Ծրագրի շրջանակում Ստացողի կողմից արդեն իրականացված գործողությունների հիման վրա, որոնք նկարագրված են սույն Համաձայնագրի 1-ին Լրացման I բաժնի Ա կետում և (բ) Ստացողի կողմից մակրոտնտեսական քաղաքականության համապատասխան դաշտի պահպանման հիման վրա: Հետևաբար սույնով Ստացողը և Ընկերակցությունը համաձայնում են հետևյալի մասին:

ՀՈԴՎԱԾ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ, ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

1.01. Ընդհանուր պայմանները (ինչպես սահմանված են սույն Համաձայնագրի հավելվածում) կազմում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

1.02. Եթե համատեքստով այլ բան չի պահանջվում, սույն Համաձայնագրում մեծատառով օգտագործված հասկացություններն ունեն Ընդհանուր պայմաններում կամ սույն Համաձայնագրի հավելվածում իրենց վերագրված նշանակությունը:

ՀՈԴՎԱԾ II. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

2.01. Ընկերակցությունը համաձայնում է սույն Համաձայնագրում սահմանված կամ դրանում նշված պայմաններով Ստացողին տրամադրել տասներեք միլիոն չորս հարյուր հազար Փոխառության հատուկ իրավունքներին համարժեք գումարով վարկ (13,400,000 ՓՀԻ), (տարբեր կերպ՝ Վարկ և Ֆինանսավորում):

2.02. Ստացողը կարող է առհանել ֆինանսավորման միջոցները Ծրագրին օժանդակելու համար՝ սույն Համաձայնագրի Լրացում 1-ի II բաժնի դրույթների համաձայն:

2.03. Ստացողի կողմից Ֆինանսավորման չառհանված մնացորդի համար վճարվելիք պարտավորության առավելագույն վճարի դրույքը պետք է կազմի տարեկան մեկ տոկոսի մեկ երկրորդը (1%-ի 1/2):

2.04. Առհանված վարկի մնացորդի համար Ստացողի կողմից վճարվելիք սպասարկման վճարը պետք է հավասար լինի տարեկան մեկ տոկոսի երեք չորրորդին (1%-ի 3/4):

2.05. Վճարման օրերն են յուրաքանչյուր տարվա փետրվարի 15-ը և օգոստոսի 15-ը:

2.06. Վարկի մայր գումարը պետք է հետ վճարվի՝ սույն Համաձայնագրի 2-րդ Լրացման մեջ սահմանված հետ վճարման ժամանակացույցի համաձայն:

2.07. Վճարման արժույթը դոլարն է:

ՀՈԴՎԱԾ III. ԾՐԱԳԻՐ

3.01. Ստացողը հայտարարում է Ծրագրի և դրա իրականացման իր հանձնառության մասին: Այդ նպատակով.

ա) Ստացողը և Ընկերակցությունը պետք է ժամանակ առ ժամանակ, կողմերից որևէ մեկի դիմումի հիման վրա տեսակետներ փոխանակեն Ստացողի մակրոտնտեսական քաղաքականության դաշտի և Ծրագրի իրականացման առաջընթացի վերաբերյալ,

բ) նախքան տեսակետների նման փոխանակումը Ստացողը պետք է Ընկերակցության ուսումնասիրությանն ու քննարկմանը ներկայացնի զեկույց Ծրագրի իրականացման առաջընթացի մասին, որը պետք է լինի այնքան մանրամասն, ինչպես խելամիտ կերպով կպահանջի Ընկերակցությունը, և

գ) առանց սույն բաժնի *ա* և *բ* պարբերությունների դրույթների սահմանափակման՝ Ստացողը պետք է անհապաղ Ընկերակցությանը տեղեկացնի ցանկացած իրավիճակի մասին, որը կարող է Ծրագրի

նպատակների վրա նյութական անբարենպաստ ազդեցության հետևանք ունենալ, կամ՝ Ծրագրի շրջանակում ձեռնարկված ցանկացած գործողության մասին, ներառյալ սույն Համաձայնագրի 1-ին Լրացման I բաժնում նշված ցանկացած գործողություն:

ՀՈԴՎԱԾ IV. ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

4.01. Կասեցման լրացուցիչ դեպք է հանդիսանում հետևյալը.

ա) առաջացել է այնպիսի իրավիճակ, որն անհավանական է դարձնում Ծրագրի կամ դրա նշանակալի մասի իրականացումը:

ՀՈԴՎԱԾ V. ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ, ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

5.01. Ուժի մեջ մտնելու լրացուցիչ պայման է հանդիսանում հետևյալը.

ա) Ընկերակցությանը բավարարում է Ստացողի կողմից Ծրագրի իրականացման ձեռք բերված առաջընթացը և Ստացողի մակրոտնտեսական քաղաքականության դաշտի համապատասխանությունը:

5.02. Ուժի մեջ մտնելու վերջնաժամկետն է սույն Համաձայնագրի ամսաթվին հաջորդող իններորդ (90) օրը:

ՀՈԴՎԱԾ VI. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ, ՀԱՍՑԵՆԵՐ

6.01. Ստացողի ներկայացուցիչն է նրա ֆինանսների նախարարը:

6.02. Ստացողի հասցեն է՝

Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարարություն
Մելիք-Ադամյան փողոց 1
Երևան, 0010
Հայաստանի Հանրապետություն

Ֆաքս՝
+374-10-524282

6.03. Ընկերակցության հասցեն է՝

International Development Association
1818 H Street, N.W.
Washington, D.C. 20433
United States of America

Հեռատիպ՝	Տելեքս՝	Ֆաքս՝
INDEVAS Washington, D.C.	248423(MCI)	1-202-477-6391

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ է Երևանում՝ Հայաստանի Հանրապետությունում, վերևում առաջինը գրված օրվա և տարվա դրությամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ կողմից

Լիազորված ներկայացուցիչ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ կողմից

Լիազորված ներկայացուցիչ

ԼՐԱՑՈՒՄ 1

Ծրագրի գործողություններ, ֆինանսավորման միջոցների առկայություն

Բաժին I. Գործողություններ Ծրագրի շրջանակում

Ա. **Ծրագրի շրջանակում իրականացված գործողություններ**: Ստացողի կողմից Ծրագրի շրջանակում իրականացված գործողությունները ներառում են հետևյալը.

1. Ստացողն ապահովել է սոցիալական ապահովության ցանցերի, կենսաթոշակների և կարիքավորների ու խոցելի խմբերի համար սոցիալական ծախսերի գերակա ծրագրերի պահպանումը՝ պահպանելով դրանց մասնաբաժինը 2010 թ. պետական բյուջեում (2009 թ. համեմատությամբ), որը հաստատվել է Ազգային ժողովի կողմից 2009 թ. դեկտեմբերի 24-ին, և ՀՀ Կառավարության՝ 2010 թ. մարտի 25-ի թիվ 275-Ն, 276-Ն և 2010 թ. սեպտեմբերի 9-ի թիվ 1238-Ն որոշումներով կարիքավորների ու խոցելի խմբերի սոցիալական ծախսերի համար հատկացվել է լրացուցիչ 6,1 միլիարդ ՀՀ դրամ:

2. Ստացողն ամրապնդել է սոցիալական ապահովության ցանցերի ծրագրերի կառավարումն ու մոնիտորինգը թիրախների ընտրության արդյունավետությունը բարելավելու և հանրության իրազեկությունը բարձրացնելու նպատակով՝ ՀՀ Կառավարության՝ 2010 թ. հունիսի 17-ի թիվ 23 արձանագրային որոշման և Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի՝ 2010 թ. հուլիսի 9-ի թիվ 86-Ա/1 հրամանով ստեղծելով միջգերատեսչական աշխատանքային խումբ:

3. Ստացողն ընդունել է ՀՀ Կառավարության՝ 2010 թ. սեպտեմբերի 30-ի թիվ 38 արձանագրային որոշումը՝ ընդունելով 4.5-5.5 տարեկան երեխաների՝ դպրոցին պատրաստվածության մեկամյա ծրագրի ընթացիկ ծախսերը ծածկելու ֆինանսավորման մեխանիզմներ:

4. Ստացողն ընդունել է ՀՀ Կառավարության՝ 2010 թ. հունվարի 29-ի թիվ 3 արձանագրային որոշումը ոչ տարափոխիկ հիվանդությունների (ՈՏՀ-ներ) մասին և ձեռնարկել է արդյունքների վրա հիմնված պայմանագրերի կնքում առաջնային առողջության պաշտպանության մակարդակում, ներառյալ՝ ՈՏՀ մասով ծառայությունները:

5. Ստացողը վարչապետի՝ 2010 թ. նոյեմբերի 16-ի թիվ 01/23.6/14392-10 գրությամբ ՀՀ Ազգային ժողով է ներկայացրել մրցակցությանն առնչվող օրենսդրության փոփոխություններ, որի նպատակն է ամրապնդել Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (ՏՄՊՊՀ) անկախությունն ու հարկադիր կիրառումն ապահովող կարողությունը և օրենսդրության առանցքային տարրերը ներդաշնակեցնել միջազգային լավագույն փորձի հետ:

6. Ստացողն իրականացրել է ոլորտի կառավարման և մոնիտորինգի բարելավման գնահատում, այն քննարկել է ոլորտի բոլոր շահագրգիռ կողմերի հետ և Բանկ է ներկայացրել Ստացողի Լայնաշերտ ցանցի և ՏՏ անվտանգության խորհրդի՝ 2010 թ. հոկտեմբերի 27-ի հանդիպման արձանագրությունը, որը ներառում է այս ոլորտում առանցքային հետագա քայլերը:

7. Ստացողը վարչապետի՝ 2010 թ. նոյեմբերի 10-ի թիվ 01/24.1/13011 գրությամբ ՀՀ Ազգային ժողով է ներկայացրել Ընդերքի մասին նոր օրենսգիրք՝ հետևելով ֆիսկալ, բնապահպանական, սոցիալական և արտոնագրման չափորոշիչների ոլորտում միջազգային լավագույն փորձին:

8. Ստացողը բավարար առաջընթացի է հասել բիզնես գործընթացների վերակազմավորման (ԲԳՎ) ուղղությամբ.

ա) 2010 թ. սեպտեմբերի 26-ին պայմանագիր կնքելով արտաքին ընկերության՝ KPMG-ի հետ՝ ԲԳՎ վերաբերյալ (պայմանագիր համար 09/101) խորհրդատվություն տրամադրելու նպատակով և 2010 թ. նոյեմբերի 1-ին Բանկ ներկայացնելով նրանց հաշվետվության ամբողջական նախագիծը՝ Պետական եկամուտների կոմիտեի հետ պաշտոնական քննարկումներից հետո:

բ) ընդունելով Կառավարության՝ 2010 թ. օգոստոսի 26-ի թիվ 36 արձանագրային որոշումը հարկային գրանցման ընթացակարգերը բարելավելու մասին օրենսդրական փոփոխությունների մասին, որն Ազգային ժողով է ուղարկվել Կառավարության՝ 2010 թ. սեպտեմբերի 15-ի թիվ 01/23.2/1899-10 գրությամբ:

գ) Ռիսկի հիման վրա աուդիտի ընտրության մասին հայեցակարգ մշակելով և այն ընդունելով Կառավարության՝ 2010 թ. հունիսի 4-ի թիվ 23 արձանագրային որոշմամբ:

դ) Կառավարության՝ 2010 թ. մարտի 31-ի թիվ 01/23.2/3412-10 գրությամբ Ազգային ժողով ներկայացնելով Ավելացված արժեքի հարկի վերադարձման հայտերի ուսումնասիրության ռիսկայնության մասին օրենսդրության կամ ընթացակարգերի փոփոխություններ:

9. Ստացողը Կառավարության՝ 2010 թ. օգոստոսի 26-ի թիվ 36 արձանագրային որոշմամբ հաստատել է օրենսդրական անհրաժեշտ դաշտ «կանաչ ուղու» գործարկման աշխատանքը բարելավելու մասին, ներառյալ՝ թույլատրելով էլեկտրոնային ստորագրությունների մոդուլի ներմարմնավորումը առևտրային աշխարհի կառավարման ծրագրում:

10. Ստացողը Կառավարության՝ 2010 թ. հոկտեմբերի 28-ի թիվ 42 որոշմամբ հաստատել է Հանրային ֆինանսների կառավարման (ՀՖԲ) բարեփոխումների ռազմավարությունը:

Բաժին II. <u>Ֆինանսական միջոցների առկայությունը</u>

Ա. Ընդհանուր: Ստացողը կարող է առհանել Ֆինանսավորման միջոցները՝ սույն բաժնի դրույթների և այնպիսի լրացուցիչ ցուցումների համաձայն, որոնք Ընկերակցությունը կարող է ծանուցմամբ նշել Ստացողին:

Բ. Ֆինանսական գումարների հատկացումը: Ֆինանսավորումը (բացի Նախապատրաստման կանխավճարը հետ վճարելու համար պահանջվող գումարներից) հատկացվում է առհանման եզակի մասնաբաժնով (տրանշով), որից Ստացողը կարող է ֆինանսավորման առհանումներ կատարել: Այդ նպատակով Ֆինանսավորման գումարների հատկացումը սահմանված է ստորև բերված աղյուսակում:

Հատկացումներ	**Ֆինանսավորման հատկացված գումարը (արտահայտված ՓՀԻ-ով)**
1) Եզակի առհանման տրանշ	13.020.000
2) Նախապատրաստման կանխավճար	380.000

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ	13.400.000

Գ. Տրանշի առհանման պայմանները

1. Առհանում չպետք է կատարվի Առհանման եզակի տրանշից մինչև Ընկերակցությանը բավարարի՝ ա) Ստացողի կողմից իրականացվող Ծրագիրը և բ) Ստացողի մակրոտնտեսական քաղաքականության դաշտի համապատասխանությունը:

Դ. Ֆինանսական միջոցների հաշվեգրումը: Բացառությամբ Ընկերակցության հետ ձեռք բերված այլ համաձայնության.

1. Ֆինանսավորման հաշվից բոլոր առհանումները պետք է Ընկերակցության կողմից հաշվեգրվեն Ստացողի կողմից հատկացված և Ընկերակցության համար ընդունելի հաշվին, և

2. Ստացողը պետք է ապահովի, որ այդ հաշվին Ֆինանսավորման որևէ գումարի յուրաքանչյուր հաշվեգրման ժամանակ համարժեք գումար հաշվարկվի Ստացողի բյուջեի կառավարման համակարգում Ընկերակցության համար ընդունելի եղանակով:

Ե. Բացառված ծախսեր: Ստացողը հանձն է առնում, որ Ֆինանսավորման միջոցները չեն օգտագործվի Բացառված ծախսերը ֆինանսավորելու համար: Եթե ցանկացած ժամանակ Ընկերակցությունը որոշում է, որ Ֆինանսավորման որևէ գումար օգտագործվել է Բացառված ծախսերի դիմաց վճարելու նպատակով, Ստացողը պետք է, Ընկերակցությունից ծանուցում ստանալով, անհապաղ Ընկերակցությանը փոխհատուցի այդ վճարման գումարին համարժեք գումար: Նման պահանջի համաձայն Ընկերակցությանը փոխհատուցված գումարները չեղյալ են համարվում:

Զ. Փակման ամսաթիվ: Փակման ամսաթիվն է 2011 թ. հունիսի 30-ը:

ԼՐԱՑՈՒՄ 2

Հետ վճարման ժամանակացույց

Վճարման օր	Վարկի մայր գումարի հետ վճարման ենթակա գումար (արտահայտված տոկոսով)
Յուրաքանչյուր փետրվարի 15-ին և օգոստոսի 15-ին՝սկսած 2021 թ. փետրվարի 15-ից մինչև և ներառյալ 2030 թ. օգոստոսի 15-ը	5%

* Տոկոսները ներկայացնում են Վարկի մայր գումարի հետ վճարման ենթակա տոկոսը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Ընկերակցությունը, Ընդհանուր պայմանների 3.03-րդ բաժնի *բ* կետի համաձայն, այլ բան է նշում:

Բաժին I. Սահմանումներ

1. «Բացառված ծախսեր» նշանակում է՝ ցանկացած ծախս.

ա) պայմանագրով տրամադրվող ապրանքների կամ ծառայությունների համար, որը ֆինանսավորել է կամ համաձայնել է ֆինանսավորել, Ընկերակցությունից և Բանկից բացի, որևէ այլ ազգային կամ միջազգային ֆինանսական հաստատություն կամ գործակալություն, կամ որը Ընկերակցությունը կամ Բանկը ֆինանսավորել կամ համաձայնել է ֆինանսավորել այլ վարկի, դրամաշնորհի կամ փոխառության շրջանակում:

բ) ՄԱԿ-ի կողմից վիճակագրական փաստաթղթերում հրապարակված (սերիա M, No. 34/Rev.3 (1986) (SITC)) Առևտրի միջազգային ստանդարտ դասակարգման 3-րդ փոփոխության (SITC, Rev.3) հետևյալ խմբերում կամ ենթախմբերում կամ SITC-ի հետագա փոփոխությունների հաջորդող խմբերում կամ ենթախմբերում ներառված ապրանքների համար, ինչպես նշված է Ընկերակցության կողմից Ստացողին ուղղված ծանուցման մեջ:

Խումբ	**Ենթախումբ**	**Ապրանքի նկարագրություն**
112		Ալկոհոլային խմիչքներ
121		Ծխախոտ՝ չմշակված, ծխախոտի մնացորդներ
122		Ծխախոտ՝ մշակված (անկախ ծխախոտին փոխարինող նյութեր պարունակելու հանգամանքից)
525		Ռադիոակտիվ և հարակից նյութեր
667		Մարգարիտներ, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր՝ մշակված կամ չմշակված

718	718.7	Միջուկային ռեակտորներ և դրանց մասեր, վառելիքի տարրեր (քարթրիջներ)՝ չճառագայթված, միջուկային ռեակտորների համար
728	728.43	Ծխախոտի մշակման սարքեր
897	897.3	Ոսկու, արծաթի կամ պլատինի խմբի մետաղյա զարդեր (բացի ձեռքի ժամացույցներից և ժամացույցի պատյաններից) և ոսկյա ու արծաթյա իրեր (այդ թվում՝ թանկարժեք քարերը)
971		Ոսկի՝ ոչ գումարային (բացառությամբ ոսկու հանքերի և խտանյութերի)

գ) Ռազմական կամ ռազմականացված օգտագործման կամ շքեղության համար նախատեսված ապրանքների համար:

դ) Բնապահպանական առումով վտանգավոր ապրանքների համար, որոնց արտադրումը, օգտագործումը կամ ներմուծումը արգելված է Ստացողի օրենքով կամ միջազգային այն համաձայնագրերով, որոնց Կողմ է հանդիսանում Ստացողը:

ե) ՄԱԿ-ի կանոնադրության VII գլխի շրջանակում ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի որոշմամբ արգելված վճարումների համար:

զ) Այն ամենի համար, որի առնչությամբ Ընկերակցությունը որոշում է, որ կոռուպցիա, կեղծիք պարունակող, դավադիր կամ հարկադիր գործելակերպ է կիրառվել Ստացողի ներկայացուցիչների կամ Ֆինանսավորման միջոցները ստացող այլ անձի

կողմից, որի համար Ստացողը (կամ մյուս ստացողը) ժամանակին համապատասխան այնպիսի քայլեր չի ձեռնարկել՝ այդ գործողությունների առկայության դեպքում դրանց հակազդելու համար, որոնք կբավարարեին Ընկերակցությանը:

2. «Փոխառության համաձայնագիր» նշանակում է՝ Ստացողի և Բանկի միջև Ծրագրին օժանդակելու համար կնքված համաձայնագիր՝ սույն Համաձայնագրի ամսաթվով, որը կարող է ժամանակ առ ժամանակ փոփոխվել: «Փոխառության համաձայնագիրը» ներառում է բոլոր հավելվածները, լրացումները և համաձայնագրերը, որոնք կցված են Փոխառության համաձայնագրին:

3. «Ընդհանուր պայմաններ» նշանակում է՝ «Միջազգային զարգացման ընկերակցության ընդհանուր պայմաններ վարկերի և դրամաշնորհների համար»՝ թվագրված 2010 թ. հուլիսի 31-ով, սույն Հավելվածի II բաժնում սահմանված փոփոխություններով:

4. «KPMG» նշանակում է՝ միջազգային ընկերություն, որը տրամադրում
է աուդիտի, հարկման և խորհրդատվական ծառայություններ:

5. «Նախապատրաստման կանխավճար» նշանակում է՝ Ընդհանուր պայմանների 2.05-րդ բաժնում (վերահամարակալվել է ստորև ներկայացված II բաժնի 2-րդ պարբերության համաձայն) նշված կանխավճար, որը տրվում է Ստացողին Ընկերակցության կողմից՝ ի կատարումն նամակ-համաձայնագրի, որն Ընկերակցության անունից ստորագրվել է 2009 թ. հուլիսի 2-ին, իսկ Ստացողի անունից՝ 2009 թ. հուլիսի 21-ին:

6. «Ծրագիր» նշանակում է՝ գործողությունների, նպատակների և քաղաքականության ծրագիր, որը նախագծվել է՝ խթանելու համար աճը և հասնելու համար աղքատության կայուն կրճատման, և որը սահմանված է կամ հիշատակված է 2010 թ. նոյեմբերի 16-ի՝ Ստացողի կողմից Ընկերակցությանն ուղարկված գրության մեջ, որտեղ հայտարարվում է Ծրագիրն իրականացնելու Ստացողի հանձնառության մասին և Ընկերակցությունից աջակցություն է հայցվում Ծրագրի իրականացման ընթացքում օժանդակելու համար:

7. «Առհանման եզակի տրանշ» նշանակում է՝ սույն Համաձայնագրի 1-ին Լրացման II բաժնի Բ մասում սահմանված աղյուսակում «Առհանման եզակի տրանշ» վերնագրված կատեգորիային հատկացված Ֆինանսավորման գումար:

Բաժին II. **Ընդհանուր պայմանների փոփոխություններ**

Ընդհանուր պայմանների փոփոխությունները հետևյալն են.

1. 2.03-րդ բաժնի *ա* պարբերության վերջին նախադասությունը (կապված Առհանման դիմումների հետ) ամբողջությամբ հանված է:

2. 2.04-րդ (Հատկացված հաշիվներ) և 2.05-րդ (Ընդունելի ծախսեր) բաժիններն ամբողջությամբ հանվել են, իսկ II հոդվածի մնացած բաժինները համապատասխան ձևով վերահամարակալվել են:

3. 4.01-ին (Ծրագրի ընդհանուր իրականացում) և 4.09-րդ (Ֆինանսական կառավարում, ֆինանսական հաշվետվություններ, աուդիտներ) բաժիններն ամբողջությամբ հանվել են, իսկ IV հոդվածի մնացած բաժինները համապատասխան ձևով վերահամարակալվել են:

4. 4.05-րդ բաժնի *ա* կետը (վերահամարակալումը կատարված է վերը նշված 3-րդ պարբերության համաձայն և վերաբերում է *Ապրանքների, աշխատանքների և ծառայությունների օգտագործում* բաժնին) ամբողջությամբ հանվել է:

5. 4.06-րդ բաժնի *գ* կետը (վերահամարակալումը կատարված է վերը նշված 3-րդ պարբերության համաձայն) փոփոխվել է հետևյալ խմբագրությամբ.

«Բաժին 4.06. Ծրագրեր, փաստաթղթեր, գրառումներ

... գ) Ստացողը պետք է պահի Ֆինանսավորման շրջանակում կատարված ծախսերի մասին վկայող բոլոր գրառումները (պայմանագրեր, հրամաններ, հաշիվ-ապրանքագրեր, հաշիվներ, ստացականներ և այլ փաստաթղթեր)՝ Փակման ամսաթվից հետո երկու տարվա ընթացքում: Ստացողը պետք է Ընկերակցության ներկայացուցիչներին հնարավորություն տա ուսումնասիրելու այդ գրառումները:»:

6. 4.07-րդ բաժինը (վերահամարակալումը կատարված է վերը նշված 3-րդ պարբերության համաձայն) փոփոխվել է հետևյալ խմբագրությամբ.

«Բաժին 4.07. Ծրագրի մոնիտորինգ և գնահատում

... գ) Ստացողը պետք է պատրաստի կամ հանձնարարի պատրաստել և Ընկերակցությանը Փակման ամսաթվից հետո ոչ ուշ, քան վեց ամսվա ընթացքում տրամադրի հաշվետվություն՝ Ընկերակցության կողմից խելամտորեն պահանջվող ծավալով և մանրամասնությամբ, ծրագրի իրականացման, իրավական համաձայնագրերով Ստացողի և Ընկերակցության կողմից իրենց պարտավորությունների կատարման և Ֆինանսավորման նպատակների իրականացման վերաբերյալ:»:

7. Հավելվածում սահմանված հետևյալ հասկացություններն ու սահմանումները հանվել կամ փոփոխվել են հետևյալ կերպ, և հետևյալ նոր հասկացություններն ու սահմանումներն են այբբենական կարգով ավելացվել Հավելվածում, և համապատասխան ձևով վերահամարակալվել են հասկացությունները.

ա) «Թույլատրելի ծախս» հասկացության սահմանումը փոփոխվել է հետևալ խմբագրությամբ.

«Թույլատրելի ծախս» նշանակում է՝ Ֆինանսավորման ցանկացած օգտագործում Ծրագրին օժանդակելու նպատակով՝ բացի Ֆինանսավորման համաձայնագրով բացառված ֆինանսական ծախսերից:»:

բ) «Ֆինանսական հաշվետվություններ» հասկացությունը և դրա սահմանումը, ինչպես սահմանված է Հավելվածում, ամբողջությամբ հանվել են:

գ) «Նախագիծ» հասկացությունը փոխարինվել է «Ծրագիր» հասկացությամբ, և դրա սահմանումը փոփոխվել է հետևյալ խմբագրությամբ.

«Ծրագիր» նշանակում է՝ այն ծրագիրը, որը նշված է Ֆինանսավորման համաձայնագրում, և որին օժանդակելու համար տրամադրվել է Ֆինանսավորումը»: Սույն Ընդհանուր պայմանների ողջ տեքստում «Նախագծին» արված բոլոր հղումները համարվում են հղում «Ծրագրին»: